

ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԿՐԱ ԵՐԿԼԵԶՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀՏԴ 81՝24

DOI: 10.56246/18294480-2024.17-43

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԴՈՆԱՐԱ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հայցորդ,
Անապոլ Ֆրանսի անվան ֆրանսիական միջազգային
կրթահամալիրի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
Էլվիսս՝ donara.mnatsakanyan@edu.isec.am

Մեր ուսումնասիրության խնդիրն է պարզել, թե միջավայրի փոփոխությունը երկլեզվության պայմաններում ինչ ազդեցություն կարող է ունենալ ներգաղթյալ երեխաների խոսքի զարգացման վրա: Հետազոտության մեջ մի դեպքում դիտարկվել է երեխայի խոսքի առանձնահատկությունները Հայաստանից դուրս, այս դեպքում՝ Սփյուռքում, մյուս դեպքում դիտարկվել է հետազոտվողի խոսքի առանձնահատկություններն արդեն հայրենիք վերադառնալուց հետո Հայաստանում: Հետազոտության մեջ կարևորել ենք նաև այն հարցը, թե ինչ վերաբերմունք ունի մայրենիի հանդեպ հետազոտվողը Հայաստանից դուրս և Հայաստանում ապրելու ընթացքում:

Ակնհայտորեն նկատվելի է այն, որ երկլեզվության պայմաններում միջավայրը փոխելիս խոսքի դրսևորումները նույնպես փոխվում են: Միջավայրի փոփոխությունն ազդում է լեզվական համապեքստի վրա: Այս առումով շատ հետաքրքիր և ուշադրության արժանի են Սփյուռքից հայրենիք վերադարձածների կարարած մեկնաբանություններն ու դիտարկումները մայրենի լեզվի վերաբերյալ երկլեզու վիճակում:

Հետազոտության մասնակիցների դիտարկումները վերլուծելով՝ պարզ է դառնում, որ ֆրանսախոս կամ արաբախոս միջավայրից հայախոս միջավայր տեղափոխվելիս հայերենի արագ յուրացում է տեղի ունեցել: Հետևաբար հարկ է նշել նաև Գվյալ ընտանիքի դիրքորոշումը մայրենիի հանդեպ: Հետազոտության մասնակիցներից շատերը նշում են հատկապես մշակութային գործոնը և ընտանիքի ազդեցությունը:

Հետազոտության համար առանցքային է և կարևոր այն հարցը, թե երկլեզու վիճակում մայրենիի ընկալումն ինչպես է տեղի ունենում հայրենիքից դուրս՝ այս դեպքում Սփյուռքում, և օտար միջավայրը փոխելով ու վերադառնալով հայրենիք՝ ինչպես է փոխվում երկլեզվակրի մայրենիի ընկալումը:

Մայրենի լեզվի ընկալման փոփոխությունից էլ երբեմն ուրվագծվում է մեկ այլ՝ ավելի ընդհանուր խնդիր՝ ազգային ինքնության ընկալման խնդիրը:

Միջավայրի փոփոխություններով պայմանավորված (այս դեպքում Սփյուռք-Հայաստան)՝ լեզվական ընկալումները փարբեր են:

Հեղափոխությունն իրականացվել է որակական մեթոդաբանությամբ: Օգտագործված հիմնական մեթոդներից են փորձագիտական հարցազրույցի մեթոդը, դիտարկման մեթոդը, քանակական հարցումները:

Հեղափոխության ընթրանքը Հայաստանում Անապոլ Ֆրանսի անվան Ֆրանսիական միջազգային կրթահամալիրի այն սաներն են, ովքեր կրել են միջավայրի փոփոխություն՝ Սփյուռքից վերադառնալով հայրենիք:

Քանալի բառեր՝ երկլեզվություն, արտալեզվական գործոններ, խոսքի ձևավորում, խոսքի առանձնահատկություններ, մայրենիի գիտակցում:

Ներածություն

Երկլեզվությունը մեկից ավելի լեզուների գործածությունն է առանձին անձանց կամ մարդկանց խմբի կողմից: Ժամանակակից աշխարհում երկլեզվությունը շատ տարածված երևույթ է: Մեկից ավելի լեզու իմանալն ու դրանցով հաղորդակցվելն այսօր շատ հաճախ կենսական պահանջ է դառնում:

Երկլեզվությունը երկու լեզուներով հմտորեն խոսելու և հասկանալու կարողությունն է: Դա արժեքավոր հմտություն է, որն անձին տալիս է ճանաչողական, մշակութային և սոցիալական տարբեր առավելություններ: Երկլեզվության ու բազմալեզվության տարածվածության և այդ երևույթների՝ մարդու իմացական զարգացման հետ սերտ կապվածության պատճառով հարցը երկար ժամանակ մնում է կիրառական լեզվաբանության, կրթության հոգեբանության, հոգելեզվաբանության, մանկավարժական հոգեբանության ուսումնասիրությունների առանցքում:

Երկլեզվության պատմությունը վաղ անցյալ ունի, որտեղ ժամանակի ընթացքում արտացոլվում են տարբեր լեզուների, մշակույթների և հասարակությունների միջև եղած բարդ փոխազդեցությունները: Պատմության ընթացքում երկլեզվությունը վճռորոշ դեր է խաղացել դիվանագիտության և միջազգային հարաբերություններում: Թե՛ հնում, թե՛ նոր շրջանում դիվանագետներին հաճախ անհրաժեշտ էր տիրապետել մի քանի լեզվի՝ հեշտացնելու ազգերի միջև հաղորդակցությունը, միջպետական հարաբերությունները:

19-րդ և 20-րդ դարերում ազգայնականության վերելքը շատ երկրներում հանգեցրեց միասնական, ազգային լեզվի տարածմանը: Սա երբեմն հանգեցնում էր փոքրամասնությունների լեզուների ճնշմանը՝ ազդելով երկլեզու համայնքների վրա: Թերևս պատճառներից մեկն էլ սա էր, որ 20-րդ դարի սկզբին մեծ հետաքրքրություն առաջացավ ուսումնասիրելու երկլեզվությունը, բացահայտելու երևույթը համակողմանիորեն: Տարբեր երկրներում միասնական լեզվի տարածման և փոքրամասնությունների լեզուների հանդեպ հակասական վերաբերմունքը դարձավ լեզվաբանների,

սոցիոլոգների, հոգեբանների, մշակութաբանների ուսումնասիրությունների համար առանցքային թեմա: Ըստ այդմ՝ առաջնային ուսումնասիրության խնդիր է դառնում տարբեր երկրներում ներգաղթյալների հանդեպ լեզվի քաղաքականության խնդիրը, ներգաղթյալների լեզվական, մշակութային, սոցիալական ներգրավվածության հարցը ընդունող երկրում: Խնդիրը բազմաշերտ է, քանի որ պետք է հաշվի առնել ոչ միայն ընդունող երկրի վերաբերմունքը, այլ նաև ներգաղթյալների դիրքորոշումը թե՛ ընդունող երկրի լեզվի հանդեպ, թե իրենց մայրենի լեզվի հանդեպ: Այս հարցի շուրջ լեզվաբանների շրջանում կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, քանի որ ժամանակակից աշխարհում հարցը բավականին արդիական է և պահանջում է համակողմանի ուսումնասիրություն: Բազմալեզու հասարակություններում, որտեղ տարածված է միգրացիան, լեզվի նկատմամբ վերաբերմունքը և գաղափարախոսությունը հաճախ ձևավորվում են ավելի լայն սոցիալական և սոցիալ-մշակութային խնդիրներ: Ներգաղթյալ ընտանիքները հաճախ են բախվում այն խնդրին, թե ինչպես օգտագործել սեփական լեզուն և մշակույթը, որպեսզի նաև դա չխանգարի իրենց երեխաների կրթական զարգացմանը, և ինչպես կրթել իրենց երեխաներին գերիշխող լեզվով, որին նրանք ծանոթ չեն¹: Այս առումով կարևոր է նշել ընտանիքների լեզվի քաղաքականությունը մայրենի լեզվի և գերիշխող լեզվի փոխհարաբերության հարցում: Մի կողմից անհնար է արտամղել կամ պատնեշ ստեղծել գերիշխող լեզվի և մայրենի լեզվի միջև, քանի որ միևնույն է գերիշխող լեզվի հետ առնչությունն անխուսափելի է թե՛ կրթական հաստատություններում, թե՛ համայնքում: Մյուս կողմից մայրենի լեզուն չկորցնելու միակ ուղին ծնողների համար մնում է այն տանը պահպանելը: Շատ հաճախ մայրենի լեզուն կորցնելու վախն է գուցե ընտանիքներին ստիպում գերիշխող լեզուն սովորելու հանդեպ դիմադրություն ցուցաբերել: Ներգաղթյալ ծնողների և նրանց լեզվական համոզմունքների հետ կապված ուսումնասիրությունները բազմաթիվ են ու բազմաբնույթ²: Ուսումնասիրություններից մեկի արդյունքում պարզվում է, որ շատ հաճախ ներգաղթյալ մայրերն նրանց երեխաների՝ գերիշխող լեզուն լիարժեք տիրապետումը համարում են կամուրջ, որը կապում է տարբեր երկրներում ընտանիքներին և տվյալ հասարակությանը, և նրանց երեխաների համար ակադեմիական բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություններ է ստեղծում³: Նշված հետազոտության մեջ, կարելի է կարծել, ծնողների կողմից գերիշխող լեզվի հանդեպ դիմադրություն չի նկատվում, նրանք ավելի բաց են այս

¹ St' u Xiao Lan Curdt-Christiansen, Educating migrant children in England: language and educational practices in home and school environments, International Multilingual Research Journal, p. 163-180, 2020:

² St' u Phil D. Liu, Chang C., Wong Terry T.-Y., Hua Shu and Wong A., Morphological awareness in Chinese: Unique associations of homophone awareness and lexical compounding to word reading and vocabulary knowledge in Chinese children, Cambridge University Press, 2012 :

³ St' u Jungmin K., Immigrant mothers' beliefs and transnational strategies for their children's heritage language maintenance, Michigan State University, Language and Education, p. 1-14, 2017:

հարցում (տվյալները հիմնականում վերցված են Ճապոնիայից և Կորեայից Միացյալ Նահանգներ ներգաղթած վեց մայրերի պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներից և դիտարկումներից): Ներգաղթյալ ծնողների վերաբերմունքը գերիշխող լեզվի հանդեպ տարբեր է և հակասական: Այս հարցը շատ նուրբ է և զգայական, հարցի շուրջ քննարկումներն ու վերաբերմունքը՝ տարբեր: Ներգաղթյալ ծնողները գիտակցում են սոցիալապես գերակշռող լեզուն սովորելու կարևորությունը, սակայն նաև ցանկանում են, որ իրենց երեխաները պահպանեն իրենց ժառանգական լեզուները ընտանեկան միասնության և սերունդների հետ հաղորդակցվելու համար: Չնայած երկլեզվության հանդեպ դրական տրամադրվածությանը՝ ներգաղթյալ ծնողները պայքարում են իրենց երեխաներին քաջալերելու համար, որ շարունակեն զարգացնել իրենց ժառանգական լեզուները¹:

Մեր ուսումնասիրության մեջ առնչվում ենք նմանօրինակ իրողությունների, լեզվական փոփոխությունների ու անցումների, որոնք նշում են հետազոտվողները: Մեր խնդիրն է պարզել, թե երկլեզվության պայմաններում միջավայրի փոփոխությունը ինչ ազդեցություն կարող է ունենալ ներգաղթյալ երեխաների խոսքի զարգացման վրա: Հետազոտության մեջ մի դեպքում դիտարկվել են երեխայի խոսքի առանձնահատկությունները Հայաստանից դուրս, այս դեպքում՝ Սփյուռքում, մյուս դեպքում՝ դիտարկվել են հետազոտվողի խոսքի առանձնահատկություններն արդեն հայրենիք վերադառնալուց հետո Հայաստանում: Հետազոտության մեջ կարևորել ենք նաև այն հարցը, թե ինչ վերաբերմունք ունի մայրենիի հանդեպ հետազոտվողը Հայաստանից դուրս և Հայաստանում ապրելու ընթացքում:

Մեթոդաբանություն

Մեր հետազոտությունը որակական է, հետազոտության մեթոդական հիմքը որակական է: Մեթոդաբանության հիմքում ընկած են որոշակի սկզբունքներ, որոնց շնորհիվ հնարավոր է հավաքել այնպիսի տվյալներ, որոնք կհամապատասխանեն հետազոտության մեջ առաջադրված խնդիրներին ու հարցադրումներին: Օգտագործված հիմնական մեթոդներից են փորձագիտական հարցազրույցի մեթոդը, դիտարկման մեթոդը, ֆոկլոր խմբային քննարկումը: Հետազոտությունն իրականացվել է Երևանում՝ Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական միջազգային կրթահամալիրում (Lycée français Anatole France): Այստեղ պայմանները թույլ են տալիս կատարել բավականին համակողմանի հետազոտություն, քանի որ կրթահամալիրը բազմալեզու է, ուսուցման ու դասավանդման լեզուն ֆրանսերենն է, ինչն ինքնին թույլ է տալիս դիտարկել հետազոտվողների, որոնք նվազագույնը երկուսից երեք լեզվով են հաղորդակցվում: Երկլեզվության ու բազմալեզվության դրսևորումներն այստեղ շատ

¹ Kwangok S., Immigrant Parents' Ideological Positioning on Bilingualism, Published in Theory and Practice, 2019.

են, որի շնորհիվ կարող ենք հետազոտել և կատարել վերլուծություններ: Կրթահամալիրում սովորում են նաև Սփյուռքից եկած աշակերտներ, որոնք երկլեզվակիր են:

Մեր հետազոտության ընտրանքը կրթահամալիրի այն սաներն են, ովքեր հայրենիք են վերադարձել Սփյուռքից խոսքի զարգացման տարբեր փուլերում: Քանի որ հետազոտությունը վերաբերում է այն հարցին, թե միջավայրն ինչ ազդեցություն կարող է ունենալ Սփյուռքից եկած երկլեզվակիրների խոսքի վրա, մեր հետազոտության թիրախում են եղել հիմնականում Լիբանանից, Սիրիայից, Ֆրանսիայից հայրենիք վերադարձած երկլեզվակիրները:

Երկլեզվությունը և մայրենիի ընկալման խնդիրը Սփյուռքում

Սփյուռքում լեզվական փոփոխություններն անընդհատ և մշտական են: Ինչպիսի փոփոխություններ կրում է Սփյուռքը, Սփյուռքի համայնքը, համապատասխանաբար նմանատիպ փոփոխություններ կրում է նաև Սփյուռքի լեզուն: Լեզուն համայնքի զարգացման հետ Սփյուռքի ձևավորման սկզբից մինչև մեր օրերը անընդհատ փոփոխությունների է ենթարկվում: Սփյուռքի լեզվի դիտարկման կարևոր խնդիրներից են լեզվի պահպանման խնդիրն ու դրան նպաստելու ուղիները: Լեզուն անընդհատ փոփոխվող երևույթ է, և ամեն սերնդի հետ տեղի են ունենում լեզվական մի շարք զարգացումներ, որոնք հատուկ են այդ սերնդին:

Սփյուռքում լեզվական երևույթների դիտարկումն առաջացնում է մի շարք հարցեր, որոնցից առանձնացրել ենք հետևյալները.

- Օտար լեզուների ազդեցությունը մայրենի լեզվի վրա հանգեցնում է անձի երկլեզու դառնալուն:
- Սփյուռքի ձևավորմանը զուգընթաց և հետագա տարիներին մայրենի լեզվի զարգացումն ու փոփոխություններն ինչ միտում ունեն:
- Համայնքն ինչպես է կարողացել պահպանել մայրենին, պահպանման համար ինչ միջոցներ են ձեռնարկվում:
- Մայրենիի վրա ինչպիսի ազդեցություն է ունենում այն երկրի լեզուն, որտեղ ձևավորվել է համայնքը:
- Երկլեզվության պարագայում հայերենը ինչպես է ընկալվում որպես մայրենի:

Նմանօրինակ հարցերը մշտապես եղել են Սփյուռքում և Հայաստանում ապրող մեր հայրենակիցների ուշադրության կենտրոնում, որոնց վերաբերյալ կատարվել են բազմաթիվ հետազոտություններ¹:

Սփյուռքում հայկական ինքնության ու լեզվի մասին վերջերս հրատարակված հետազոտություններից մեկում նշվում է հետևյալը. «Սփյուռքեան ինքնությունները սովորաբար կը ներկայացուին իբրեւ անկայուն, փոփոխական, պարագայական, միշտ

¹ Սարգսյան Մ., Համբարձումյան Վ. և ուրիշներ, Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում, Երևան, 2023; Տիոյան Ս., Ֆիշենկճյան Ա., Արևմտահայերենի արդի վիճակը հայկական գաղթօջախներում (Արևմտյան Եվրոպա), Ե., 2017:

կայանալու ընթացքի մէջ գտնուող, անընդհատ սակարկուող, եւ մնայուն կառուցման ու վերակառուցման գործընթաց ապրող վիճակներով: Այս բոլորը կը բացայայտուին 2019-ին Արժանթինի, Գանատայի, Լիբանանի եւ Ռումանիոյ մէջ կատարուած հարցախոյզին արդիւնքներուն հիմամբ: Սփիւռքի մէջ ծնած սերունդները իրենց բազմադիմի պատկանելիութիւնները շարունակաբար կը բանակցին իրենց բնակած երկիրներուն, իրենց ժառանգած մշակոյթին, ինչպէս նաեւ՝ համասփիւռքեան տարածքին եւ տարբեր այլ վայրերուն»¹:

Մեր հետազոտության մէջ փորձել ենք դիտարկել նաև այն, թե ինչ առանձնահատկություններ են դրսևորվում երկլեզվակիր հետազոտվողների խոսքի ձևավորման ընթացքում Սփյուռքից հայրենիք վերադառնալուց հետո: Կարևորել ենք, թե արդյոք հայրենիք վերադառնալուց հետո երկլեզվակիր հետազոտվողի լեզվական անցումը սահուն է տեղի ունենում: Արդյոք երկլեզվակիրը միջավայրը փոխելիս, եթե անգամ միջավայրն իր համար հարազատ է, իսկ հայերենը գիտակցվում է որպես մայրենի, չի ունենում անհարմարություններ այդ փոփոխությունների ընթացքում:

Հետազոտության ընթացքում հաշվի ենք առել, թե լեզվական և արտալեզվական ինչ գործոններ կարող են ազդել երկլեզվության դրսևորման վրա: Մենք առանձնացրել ենք այս գործոններից մի քանիսը.

- պայմաններ, որտեղ ձևավորվում և զարգանում է հետազոտվողի խոսքը (միջավայր, ընտանիք, համայնք),
- ընտանիքի անդամների ազգային պատկանելությունը,
- հետազոտվողի տարիքը,
- այն տարիքը, երբ դրսևորվել է երկլեզվությունը,
- մշակութային գործոն,
- անձնային մի շարք առանձնահատկություններ,
- ուսումնական հաստատության լեզվի քաղաքականություն:

Երկլեզվության պայմաններում միջավայրի փոփոխության ազդեցությունը սփյուռքահայ երեխաների խոսքի զարգացման վրա

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ միջավայրի փոփոխությունը (այս դեպքում Սփյուռքից դեպի հայրենիք վերադարձած) երկլեզվակիր երեխայի խոսքի ձևավորման վրա: Նշենք լեզվաբանական առումով մի կարևոր դիտարկում, այն է, որ շատ հաճախ այդ ազդեցություններն ու փոփոխությունները դուրս են մնում լեզվաբանության ուսումնասիրության ոլորտից, դրանք գերազանցապես արտալեզվական են: Հետազոտվողների դիտարկումները հաշվի առնելով՝ կարելի է նշել, որ խոսքի դրսևորումների ու դրանց փոփոխությունների վրա ազդեցու-

¹ Զիլինկիրեան Հ., Հայկական Սփիւռքի Հանրային Կարծիքը, Հայկական Սփիւռքի Հարցախոյզ, 2019:

թյուններն հիմնականում հոգեբանական են, սոցիալական, մշակութային և այլն: Մայրենիի վերաբերյալ հարցերը մեկնաբանելիս հետազոտվողներից շատերը շեշտում են այն, որ մշակութային համատեքստը, համայնքի փոփոխությունը մեծապես նպաստել են հայերենի արագ յուրացմանը: Շատ են ընտանիքները, որոնք տեղափոխվել են Հայաստան, և երեխաները միանգամից դրսևորվել են հայերենի լավ իմացությամբ: Հետևաբար հարց է առաջանում՝ մշակութային համատեքստը կարող է գործոն լինել լեզվի արագ յուրացման և խոսքի զարգացման համար: Մշակութային գործոնի ազդեցությունն առանցքային է: Հետազոտվողներից շատերն են նշում մշակութային գործոնի ազդեցությունը խոսքի զարգացման վրա, այն դեպքում մասնավոր, երբ այլ մշակույթից տեղափոխվել են հայկական իրականություն: Օրինակ հետազոտվողներից ոմանք նշում են, որ, ճիշտ է, խոսել են տանը հայերեն, բայց եթե Հայաստան չգային, չէին իմանա հասկացությունների մասին, որոնք հայկական մշակույթի անբաժան մասն են, և որոնց մասին միայն Հայաստանում կարող էին լսել կամ իրականում տեսնել: Այսպես երեխան սովորել է բառը, իմացել իմաստը, օրինակ՝ լավաշ, հայկական տարագ, կարաս, թոնիր և մեր մշակույթին խիստ բնորոշ նմանատիպ շատ բառեր, բայց երբեք չի տեսել ու շոշոփել: Նշում են, որ գալով հայրենիք, լեզվական հասկացություններն առարկայացել են, ինչը լեզվի զարգացման համար անչափ կարևոր է: Բոլոր հետազոտվողները՝ որպես երկլեզվակիր, շատ կարևորում են մշակութային գործոնը, ընտանիքի լեզվական կողմնորոշումը, համայնքի լեզուն, կրթական հաստատության լեզուն և այլն: Մշակութային ցանկացած դրսևորման ժամանակ նրան սպասարկող լեզուն արտացոլում է երևույթները համարժեք: Ընդհանուր առմամբ, լեզվի ցանկացած փոփոխություն ի վերջո հասարակության, ազգային-մշակութային և լեզվական անդամների փոփոխությունների ընդհանրությունն է: Լեզուն դիտվում է որպես խոսողների սեփականությունը, բայց միևնույն ժամանակ կուտակային գործառույթի շնորհիվ այն ազգային մշակույթի իսկական հայելին է: Հետազոտվողները լեզուն դիտարկում են ոչ միայն մշակութային ամենակարևոր բաղադրիչներից մեկը, այլ նաև իրենց հայկական ինքնության խորհրդանիշը: Ուրվագծվում է լեզու-մշակույթ-ազգային ինքնության գիտակցում կապը: Լեզվի և լեզվամտածողության ուսումնասիրության հետ է կապված նաև Սփյուռքում համայնքի ինքնության ու ազգային ինքնագիտակցության խնդիրը, որը Սփյուռքի ձևավորման սկզբնական փուլից մինչ այսօր ամենաարդիական խնդիրն է:

Մայրենի լեզուն դառնում է ազգային ինքնության խորհրդանիշ հատկապես նրանց համար, ովքեր գիտեն օտար լեզուներ, մայրենիով հաղորդակցվելու կարիք ու պակաս ունեն: Հետազոտվողներից շատերը նշում են, որ հատկապես այն դառնում է

¹ Верещагин Е.М., Гостомаров В., Язык и культура, Лингвострановедение в преподавании русского языка как иностранного, Методическое руководство, Издание 4-е, 1990.

ինքնության խորհրդանիշ այն դեպքում, երբ կրողը ապրում է տվյալ լեզվի սոցիալական խմբից, հայրենիքից հեռու, օտար միջավայրում, այս դեպքում Սփյուռքում:

Հետազոտվող-գործածվող լեզու-դպրոց

Հետազոտվողներից շատերը նշում են, որ երկլեզվության պայմաններում փոխելով միջավայրն ու մշակույթը՝ երբեմն խոսքի փոփոխությունն ինքնաբերաբար է տեղի ունենում: Այսինքն՝ կարելի է կարծել, որ երկլեզվության վիճակում լեզվի՝ մեկը մյուսին փոխարինելը երբեմն անձի կողմից անվերահսկելի է, կատարվում է շատ սահուն՝ կախված մշակութային համատեքստից: Եթե բերենք Սփյուռքում ապրող երեխայի օրինակը (Լիբանան), կտեսնենք, որ դպրոցում արաբերեն հրաժեշտ տալով ընկերներին՝ մտնում է տուն և ընտանիքում հաղորդակցվում հայերեն, հետո գնում խանութ, նորից շփվում արաբերենով, խոսքի այդ արագ փոփոխությունը, ըստ հետազոտվողների, մտքում տեղի է ունենում շատ արագ, որը երբեմն չգիտակցված է: Եթե հաշվի առնենք այն, որ երեխան հաճախում է ոչ հայկական դպրոց, նշանակում է, որ նա օրվա հիմնական մասն անցկացնում է արաբախոս համայնքում: Այսինքն՝ դպրոցում գործածվող լեզուն արաբերենն է:

Իսկ հայրենիքում ակնհայտ է, որ լեզվական անցումներն այնքան հաճախակի չեն լինում, որքան հայրենիքից դուրս: Եթե հաշվի առնենք, որ մեր հետազոտության դեպքում երեխան հաճախում է ֆրանսիական կրթահամալիր, որտեղ դասավանդման լեզուն ֆրանսերենն է, այստեղ կնկատենք, որ արաբերենին փոխարինելու է գալիս ֆրանսերենը: Բայց կա մի շատ կարևոր գործոն, որ դպրոցի համայնքը մեծ մասամբ հայկական է, և, այնուամենայնիվ, դպրոցում գտնվելու ընթացքում հետազոտվողները առնչություն ունեն հայերենի հետ: Բնականաբար հայրենիքում գտնվելու ժամանակ միանշանակ դպրոցում հետազոտվողը խոսում, շփվում է նաև հայերեն: Բնականաբար անհամեմատելի են դպրոցում հայերեն շփվելու հնարավորությունները հետազոտվողների համար Սփյուռքում և հայրենիքում:

Հետազոտվող-գործածվող լեզու- ընտանիք

Այն հարցին, թե Սփյուռքում գտնվելու ընթացքում ընտանիքում հիմնականում որ լեզուն են ընտրել շփման համար, հետազոտվողների մեծամասնությունը միանշանակ նշում է հայերենը: Սա այն դեպքում, երբ ծնողներից երկուսն էլ հայ են, և մեր հետազոտության համար հիմնականում գործ ունենք այդ ընտանիքների հետ: Ընտանիքն այն տիրույթն է, որտեղ հետազոտվողն իրեն ապահով է զգում, որ խոսելով հայերենով, միանշանակ հասկացված է լինելու: Այստեղ չկա միջավայրի ազդեցության գործոն: Հայրենիքում գտնվելու պայմաններում պատկերը նույնն է, երկլեզվության պայմաններում գերակշռում է հայերենը: Եթե նկատի ունենանք, որ բոլոր դեպքերում երկլեզվակիրը ընտանիքում գերադասում է մայրենին, միանշանակ

պարզ է, որ երկլեզու վիճակը դրսևորվում է արտաքին ազդակների ազդեցության ներքո, այն, որ միջավայրն է թելադրում երկու լեզու կրելու երևույթը:

Հետազոտվող-գործածվող լեզու-համայնք

Սփյուռքում համայնքի հետ շփման համար լեզու ընտրելը ենթադրում է մի քանի կարևոր պատճառ: Այն է, թե շփումը որ համայնքի հետ է՝ օտարախոս թե հայախոս, իսկ հայախոս համայնքում էլ հարց է առաջանում, թե այստեղ հայերը որքանով են տիրապետում հայերենին: Բնականաբար հայերենի վատ իմացության դեպքում հետազոտվողները նշում են, որ միանգամից անցնում են օտար լեզվին, քանի որ այդպես արագ է տեղի ունենում հաղորդակցումը, հասկացվածության հավանականությունը մեծանում է: Հետազոտվողները նշում են, որ Սփյուռքում՝ իրենց համայնքում, կախված իրավիճակից և լեզվի իմացության մակարդակից, կրկին շատ են երկու լեզուների անցումները: Իսկ արդեն հայրենիքում համայնքի, շրջապատող մարդկանց հետ հաղորդակցման համար անհրաժեշտություն չկա ընտրել լեզուն, հաղորդակցումը հայերենով է: Այստեղ, սակայն, հետազոտվողների մի մասը նշում է, որ բախվում են խնդրի հայերենի թույլ իմացության պատճառով: Այս դեպքում կրկին երկլեզվակիրը կարիք է ունենում, այնուամենայնիվ, ընտրել լեզուն՝ ըստ հաղորդակցման կարիքի: Պարզ է, որ եթե հայրենիքից դուրս գտնվելու ժամանակ շփման ընթացքում երկլեզվակիրն ունենում է լեզվական անցումներ, ապա հայրենիքում այդ երևույթը նվազագույնի է հասնում, հետևաբար ակնհայտ է այստեղ միջավայրի մեծ ազդեցությունը լեզվական անցումների հարցում:

Հայկական միջավայրի ազդեցության հակասականությունը

Հայկական միջավայրը Սփյուռքից վերադարձած հետազոտվողների համար երբեմն առանձնանում է հակասական գծերով: Սփյուռքից վերադարձած հետազոտվողների մեծամասնությունը նշում է ևս մի կարևոր լեզվական առանձնահատկություն: Հայրենիքում գտնվելով՝ միջավայրի կողմից կրկին չհասկացված մնալու և հաղորդակցման խնդիր ունենալու վերաբերյալ: Դրա պատճառներից մեկը հայերենի երկու գոյավիճակներն են՝ արևելահայերենը և արևմտահայերենը: Այս առումով հետազոտվողների դիտարկումներից կարելի է փաստել, որ հայկական միջավայրում իրենց համար իրենք ստեղծում են ևս մեկ լեզվական, այսպես կոչված, միկրոմիջավայր՝ արևմտահայերեն հաղորդակցվողների շրջանակ: Այս միջավայրում իրենց ավելի հարմարավետ է շփումը: Իհարկե, այն հետազոտվողները, ովքեր տևական ժամանակ մնում են հայրենիքում, հեշտությամբ կարողանում են միջավայրի ազդեցության ներքո յուրացնել նաև արևելահայերենը: Հայերենը, լեզվի պատմության փուլեր անցնելով, ունենալով երկու ճյուղ, բարբառներ ու բազմաշերտ կառուցվածք՝ համապատասխանաբար բերում է յուրահատուկ ու բարդ մարտահրավերներ նույնիսկ լեզվակիրների համար:

Ակնհայտ են սոցիալ-հոգեբանական անցումները երկլեզվակիրների շրջանում լեզվական միջավայրը փոխելիս: Լեզուն ու լեզվական վիճակը փոխելով՝ հետազոտվողը երբեմն կարող է ունենալ հոգեվիճակի փոփոխություն: Այնուամենայնիվ, երկար տարիներ Սփյուռքում ապրող հետազոտվողը միանգամից փոխում է լեզվական միջավայրը, որը երբեմն առաջացնում է տարաբնույթ խնդիրներ: Արաբախոս կամ ֆրանսախոս միջավայրից տեղափոխվելով՝ համայնքում, ընտանիքում, դպրոցում անընդհատ հայերեն լսելը անսովոր է նրանց համար: Լեզվական այս երկփեղկված վիճակը, երկատվածությունը երբեմն հանգեցնում է նրան, որ ստեղծում են հաղորդակցման նախընտրելի շրջանակ, ինչպես նշել ենք վերևում: Լինելով հայկական միջավայրի ազդեցության ներքո՝ միևնույն է, այս երևույթը թույլ է տալիս ենթադրելու, որ լեզվական միջավայրը փոխվել է, բայց լեզվավիճակը դեռ երկփեղկված է: Այն հարցին, թե որն է պատճառը միմյանց հետ շփման համար ընտրել արաբերենը, հետազոտվողների մի մասը նշում է, որ չի ուզում միջավայրի ազդեցության ներքո թուլացնել այդ լեզվի իմացությունը, ասել է թե այդ լեզվի պահպանության հարց է դրվում: Հետազոտվողների մի մասն էլ պատասխանում է, որ մշակութային գործոն կա, որը ենթադրում է հաղորդակցումը միայն այդ լեզվով (իրավիճակներ պատմելը, մշակութային հատուկ բառեր, որոնք բնորոշ են միայն այդ լեզվին), մյուսներն էլ պատասխանում են, որ առայժմ հաղորդակցման ժամանակ ավելի հարմարավետ են զգում հենց այդ լեզվով:

Եզրակացություն

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ թե՛ Սփյուռքում, թե՛ հայրենիքում երկլեզվակիրների խոսքի զարգացումը յուրովի է ենթարկվում միջավայրի ազդեցությանը: Երկու դեպքում էլ լեզվի փոփոխություններն ու անցումները կախված են ոչ միայն լեզվական գործոններից, այլ նաև արտալեզվական, որն այս դեպքում, ըստ հետազոտվողների, մեծ ու կարևոր նշանակություն ունի: Ակնհայտ է, որ միջավայրի փոփոխությունների հետևանքով անձի երկփեղկված վիճակը ենթադրում է նաև լեզվական երկփեղկվածություն:

Սփյուռքից վերադառնալով և գտնվելով հայկական միջավայրի ազդեցության ներքո՝ միևնույն է երկլեզվակիրները շատ հաճախ հաղորդակցման համար ընտրում են այն երկրի լեզուն, որ երկրից որ եկել են: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ լեզվական միջավայրը փոխվել է, բայց լեզվավիճակը դեռ երկփեղկված է: Դա էլ երկլեզու վիճակի կարևորագույն ու առանցքային դրսևորումն է: Որեմն կարելի է ընդգծել, որ և՛ Սփյուռքում, և՛ հայրենիքում ապրելու ընթացքում միջավայրը մեծապես ազդում է երեխայի խոսքի ձևավորման ու զարգացման վրա: Դրա վրա մեծապես ազդում են համայնքում, դպրոցում, ընտանիքում գործածվող լեզուն: Լեզվական անցումները տեղի են ունենում վերոնշյալ գործոններով պայմանավորված: Այդ ազդեցությունները բազմաշերտ են, բազմաբնույթ և երբեմն հակասական, դրանք պահանջում են երկարատև ու համակողմանի ուսումնասիրություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սարգսյան Մ., Համբարձումյան Վ. և ուրիշներ, Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում, Երևան, 2023:
2. Տիոյան Ս., Ֆիշենկճյան Ա., Արևմտահայերենի արդի վիճակը հայկական գաղթօջախներում (Արևմտյան Եվրոպա), Ե., 2017:
3. Զիլինկիրեան Հ., Հայկական Սփիուքի Հանրային Կարծիքը, Հայկական Սփիուքի Հարցախոյզ, 2019:
4. Bialystok E. and al., Bilingualism, Aging and Cognitive Control, American Psychological Association, Vol. 19, No. 2, 2004, p. 290–303.
5. Bialystok E. and Barac R., Bilingual Effects on Cognitive and Linguistic Development: Role of Language, Cultural Background and Education, Toronto, Canada 2012, p. 413–422.
6. Bialystok E., Bilingualism in development: Language, literacy, and cognition. New York, Cambridge University Press, 2001, p. 1-300.
7. Bialystok E., Fergus I.M. Craik, Gigi Luk, Lexical access in bilinguals: Effects of vocabulary size and executive control, Journal of Neurolinguistics, Volume 21, Issue 6, 2008, p. 522-538.
8. Genesee F. Early bilingual development: One language or two? Journal of Child Language, 1989, p. 161-179.
9. Genesee F., Lambert W. E., N. Holobow, Chartrand L., Bilingual education for majority English-speaking children, European journal of psychology of education 8, 1993, p. 3-22.
10. Hélot Ch., Bilingual education in France : School policies versus home practices, Chapter 7, France, 2008.
11. Jungmin K., Immigrant mothers' beliefs and transnational strategies for their children's heritage language maintenance, Michigan State University, Language and Education, p. 1-14, 2017
12. Kwangok S., Immigrant Parents' Ideological Positioning on Bilingualism, Published in Theory and Practice, 2019.
13. Phil D. Liu, Chang C., Wong Terry T.-Y., Hua Shu and Wong A., Morphological awareness in Chinese: Unique associations of homophone awareness and lexical compounding to word reading and vocabulary knowledge in Chinese children, Cambridge University Press, 2012 .
14. Xiao Lan Curdt-Christiansen, Educating migrant children in England: language and educational practices in home and school environments, International Multilingual Research Journal, p. 163-180, 2020.

15. Zurer Pearson B., Fernández S., Oller D.K., Cross-language synonyms in the lexicons of bilingual infants: One language or two?, Cambridge University Press, Journal of child language, 1995.
16. Верецагин Е.М., Гкостомаров В., Язык и культура, Лингвострановедение в преподавании русского языка как иностранного, Методическое руководство, Издание 4-е, 1990.

THE INFLUENCE OF THE ENVIRONMENT ON THE FORMATION OF SPEECH OF DIASPORA CHILDREN IN CONDITIONS OF BILINGUALITY

MNATSAKANYAN DONARA

PhD student

Institute of Language, NASRA

Teacher of the Armenian Language and Literature

Lycée français Anatole France

e-mail: donara.mnatsakanyan@edu.isec.am

The task of our study is to investigate the effect that the change of environment can have on the speech development of immigrant children in bilingual conditions. In one case, the child's speech characteristics were observed outside of Armenia, particularly, in the Diaspora, and in the other case, the child's speech characteristics were observed in Armenia after returning to the homeland. In the research, we also highlighted the question of the attitude of the subject towards the native language outside of Armenia and while living in Armenia.

Obviously, being bilingual, speech manifestations change when the environment changes. The change in the environment affects the linguistic context. In this regard, comments and observations regarding the native language of children who returned to their homeland in a bilingual state are very interesting and deserve attention.

Analyzing the observations of the study participants, it is clear that their Armenian language developed very quickly when they moved from a Francophone or Arabic-speaking environment to an Armenian-speaking environment. In this case, it is also necessary to mention the attitude of this family towards their mother tongue. Most of the participants in the study mention the cultural factor and, in particular, the influence of the family.

A key and important research question is how the perception of the mother tongue occurs in a bilingual situation outside the homeland, particularly, in the Diaspora, and how the bilingual's perception of the mother tongue changes after changing the foreign environment and returning to the homeland.

From the change in the perception of the mother tongue, another, more general problem sometimes emerges: the problem of the perception of national identity. Due to

changes in the environment (in this case Diaspora-Armenia), language perception is different and is worth being studied.

The report is based on a study conducted using qualitative methodology. The main methods used include expert interview method, observation method and quantitative surveys.

The sample of the study consisted of students of the Anatole France French International Educational Complex in Armenia who experienced a change of environment after returning home from the Diaspora.

Keywords: *bilingualism, extralinguistic factors, speech formation, speech features, awareness of the native language.*

ВЛИЯНИЕ СРЕДЫ НА ФОРМИРОВАНИЕ РЕЧИ ДИАСПОРАЛЬНЫХ ДЕТЕЙ В УСЛОВИЯХ БИЛИНГВАЛЬНОСТИ

МНАЦАКАНЯН ДОНАРА

Аспирант Института языка НАН РА

Преподаватель армянского языка и литературы

в школе Lycée français Anatole France

электронная почта: donara.mnatsakanyan@edu.isec.am

Задача нашего исследования – выяснить, какое влияние может оказать смена окружающей среды на речевое развитие детей-иммигрантов в билингвальных условиях. В одном случае особенности речи ребенка наблюдались за пределами Армении, в данном случае в Диаспоре, а в другом случае наблюдались особенности речи ребенка уже в Армении, после возвращения на родину. В исследовании мы также отметили важность вопроса о том, какое отношение к родному языку имеет исследуемый, живя за пределами Армении и в Армении.

Отчетливо заметно, что при изменении среды изменяются и речевые проявления билингвистов. Изменение окружающей среды влияет на языковой контекст. В этой связи весьма интересны и заслуживают внимания комментарии и наблюдения относительно родного языка детей, вернувшихся на родину в двуязычном состоянии.

Анализируя наблюдения участников исследования, становится ясно, что при их переходе из франкоязычной или арабоязычной среды в армяноязычную среду происходило быстрое усвоение армянского языка.. В этом случае необходимо также упомянуть об отношении данной семьи к родному языку. Большинство участников исследования отмечают культурный фактор и, в частности, влияние семьи.

Ключевой и важный вопрос для исследования: как происходит восприятие родного языка в билингвальной ситуации за пределами Родины - в данном случае, в диаспоре, и как меняется восприятие родного языка у билингва после изменения иностранной среды и возвращение на родину?

Из изменения восприятия родного языка иногда вырисовывается другая, более общая проблема: проблема восприятия национальной идентичности. Из-за изменений в окружающей среде (в данном случае Диаспора-Армения) восприятие языка различно и заслуживает нашего изучения.

Доклад основан на исследовании, проведенном с использованием качественной методологии. Среди основных используемых методов — метод экспертного интервью, метод наблюдения и количественные опросы.

Выборку исследования составили ученики Французского международного образовательного комплекса имени Анатоля Франса в Армении, пережившие смену обстановки после возвращения на родину из диаспоры.

Ключевые слова: билингвальность, экстралингвистические факторы, формирование речи, особенности речи, осознание родного языка.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.04.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 10.05.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: